



ՏՐԵՅ ԽՈՍԿ

Մին եթիմ տղա յա ինոնմ, մինգլել ուրանն տատը: Լոխ էտ տղեն իրեսնըլեր խոսում ըն, թա խե լը՞ս կնեզյ անում: Վերւը պիրում ըն տըրան փսակում, էտ տղան հառնը թողում ա տանը, ինքըը քյինամ զարիբոթուն, վար ծառայություն անե, փող ըխշադի: Տա շատ ա քյինամ, թա՝ խրեզյ, հսնում ա մին շիհար, տընդ մին խազայինու քշտի դուզուղ ա նի մննում: Էտ խազայինն ասում ա.—Իրեր տարե քշտիս ծըռըլըլական ըս, իրեր տըռնան ետը քեզ իրեր մանեթ փող ըմ տըլական: Պայման ըն կապում, տղան ըսկսում ա ծըռայիլը:

Մին տարե վըկեր անց ա կենում, տահանց ընգլուններան մին խոչա յա հիրան քլըրվանավը կյամ էտ շիհարը: Էտ տղեն տատն էլ խոչքեն ասած ա ինքնմ.—Կըթինաս արեսնաս թոռնըս հո՞ւց ա, հո՞ւց յի: Խոչան վըկեր կյամ ա տըեղ, էտ տղեն ծըռեռքեն պեն յի ինոնմ, վար զարկե տոն, մին կատու վա փոնում, քցում պարկը, ըռեխիը կապում, տամ ուրան, թա կըտանես մրեր տոն:

Խոչան կատուն յոր ա օնում, քյինամ: Տատ ա քյինամ, թա խրեզյ, տընսնում ա մին յրանա դուզում մին հարուստ մարթ հիրան քյարվանը վըկեննը կըցըրած, մարթիքը լոխ սուփրան քցած, օզում ըն վար հաց օտեն: Տահանք լիհա հացը վար վըկեր ըն տինում, մոկները եր են քաղում: Խոչան էլ վար նհըտնեն նստում ա,

տրիսնում ա հաց օտքելն ամենալ շի կյամ, բուրդան կատում մըենն ա ինպիսիմ: Պարկը ետ ա անում, կատում տուն օնում, տինհնում սուփրեն յիրա: Մոկները լոխ տես ու տեն փախնում ըն, տահանք նստում ըն, հալալ հաց օտում: Էտ խաղայինը խուզեն ասում ա.— Հինչ վրեր օգես, թեզ ըմ տամ, մենակ թա էտ կատուն ինձ տու Խոշան թա ամանաթ պես ա, կարել լրմ: Վերը, շատ դաշանք ընելան ետք խաթիրը քթենում ա, քսան հաղար մանեթ տամ, կատուն ինք օնում: Խոշան էտ փողը տանում ա տամ պըռավեն, ասում ա՝ թոռնտ ա դարկալ:

Պառավը հառնեն նհետ էտ փողավը մըեծ-մըեծ տներ ա շինհնում, պակաս-պռատ լոխ ուրիշը քցնում, ըսկսում մրթըվարի ապրելը:

Մին տարե վար անց ա կենում, խոշան նորըմինան ա ուրան քյըրվանավն անց կենում, նի մնենում համին շիհարը: Էս դմնհնում էլ վար քյինամ ա էտ տղեն կոշտը, վար տրա հաղան-պենան հրցընե, խարար գլիդան, տղան մին մըեծ հիլի յա տամ խուզեն, թա կըտանես մըեր տոն:

Խոշան քյըրվանավը հղե յա ինում, քյինամ: Մին քանի օր վար քյինամ ա, խիլլա հըռանում, եշում ա, տըեսնում մին ճիրու դրաղե թաքավքերեն օխտը ըխնըկեթյը մզըրնեն թրշած, ուրիշը խառնած, կարում լըն, թա հըվագեն: Հիլին տուն ա օնում, տամ էտ ըխնըկերանցը, տահանք հիլուն մաշին եշում ըն, թա էս հինչ լանլ պես ա, հինչ վար օգես, թեզ ընք տամ, մըեզ տու Խոշան թա՝ պա ուրիշըն ապրանք ա: Ըխնըկեթյը թա՝ վրելինը, տրա տարը մըզանա նըզանալ շի: Խուզեն խաթիրը քթենում ըն, մին քսան հաղար մանեթ տամ, հիլին ինք օնում: Խոշան փողը տանում ա տամ պըռավեն:

Իրեք տարեն անց ու կենում: Էտ եթիմ տղան ուրան ծառայությունը վրեր պըճնուս ա, խաղայինն ասում ա.— Թեզ իրեք մանեթ փիտի տամ, մեհենգի իրեք մընիթին տեղակ իրեք խոսկ ըմ ըսրական, ընջուկետ օղ կանես, մըտետ պահես: Սուրթան ասում ա.— Վըեր հիշտեղ էլ ինիս, հիշքան էլ նըեղ տըեղ ինիս, քըերծու յիրա, ծնրու մալի, կիտու զրաղե ուրուզյունը մնաս վուշ: Ետնան էլ թա՝ ուրուզին պենին վրել մին վախտ խառնվես վուշ: Վերլումն էլ ասում ա.— Հիշքան էլ նըեղ տըեղ ինիս, թայդի լին-գլիս, հնվաալա կանես:

Տղան հղե յա ինում, քյինամ: Շատ ա քյինամ, թա խրեզի, հսնում ա մին ծնրու դրաղ, ծնրավն էլ մին կյետ ա ինում անց

կընալիս, կլետեն զրադեն էլ մին քյարվան վըեր եկած: Էտ քըրվանեն մարթիքյը տղին ասում ըն.—Մթեն ա, մըեր քշտին կաց, թշրիւանա լիւանվ էլլա եր կըկենաս, քյինաս: Սա թա իստի տըեղրես մընալ շըմ: Տղան քյինամ ա մին շեն տըեղ կենում, թշերը տըեղ թոռ ա կյամ, սիլըսին անում, կյետը վըրարում, էտ քյարվանը մրթուցավը-պենավը ամմեն հինչ թշիւմ, տանում: Մին քանի ամըես տա վըեր թյինամ ա, տըեսնում ա մին տըեղ մին խոր ճիրավըեր, շատ մարթիքյ կոխսկեն հվաքված, վեղրան թյինդիրան կապում ըն, թշիւմ ճիրավիրը, մին մարթ էլ նի յա մըննում, վըեր վեղրան ճիրավ լըսնե, տուս օնե: Հու վըեր նի յա մըննում, վըել կարում ա ճուր տուս օնե, վըել էլ ինքյն ա ետ կյամ: Էտ տղան ասում ա.—Թուղեցեր հալա մին ես էլ փորցեմ, տըեսնամ պենը հինչումն ա: Տրան էլ ըն թյինդիրանվ կապում, թշրիւանը ճիրավըերեն տակը: Վըեր հանում ա ճիրավըերեն լափ տակը, թյանդիրն ուրան անա ետ ա անում, վըեր վեղրան ճիրավ լըսնե, եշում ա տըեսնում մին շատ այբեջառ տղամարթ, մինգյել մին դաշնոյ, կուկլա ախճիգյ եկեն ըռաշին վըեննը կացեն: Տահանք տղեն հրցընում ըն, թա՝ մզանա հու վա՞ զաշանգյ, մունք ուրանը բար ը՞նք, թա՝ չէ: Էտ տղան թա՝ սիրիլին յիրա յա: Տրանա ետը տղեն յոր ըն օնում, տանում մին քանի պադվալ նշանց տամ, լոխ մարթու կլիխըներավ լիգյը: Ախճիգյն ասում ա.—Էս կլիխընեն լոխ տիյերան եկած մարթուցը կըլիխընեն ա: Հու վըեր եկալ ա, թա ճուր տանե, էտ պենն ուրան հըրցըրալ ընք, ասալ ըն տուք ուրանը բար շըք, մունք էլ կլիխը կտրալ ընք, քցալ պադվալը: Էտ քանեն մաշին մենակ տու վիր, վըեր մըեր հարցեն գուզ պադասխան տումըեր, տրա հետե տու մըեր աշկեն լուան ըս: Պիրում ըն էտ տղեն խիլա վըեսկե խազեա տամ, օրիշ հղոցավ հղե թցնիմ, տուս ա կյամ, թյինամ: Տրանա ետն էտ տղան շատ տըեղեր ա շոռ կյամ, շատ պեներ ա տըեսնում, մին քանի տարե անց կացած, հանում ա ուրան երգիիրը:

Թյինամ ա ուրան տանը տըեղը, տըեսնում տոնը կա վուշ, կոխսկեն մին մըեծ պալատ ա պիցիրանցալ, առաշը լավ բախնա քցած, մուտանում ա, եր ինում բալկոնը, ակուշկավը եշում, տըեսնում ուրան կնեղյը տախտեն նըստած, մին զահիլ տղա յէլ կլիխը տիրած ծուլյներեն, քումավ հնցած: Մտկումն ասում ա.—Սա ինի, շինի, կնզանըս սիրականն ա. մավզերը տուս ա օնոսն, վըեր յիրա անե վըեր քցի, մինգյել խազայինին վերշին խոսկը

մըսետն ա քցում, ետ քաշում, տինոնմ զորութումը։ Վըեր նի յա
մննում տոն, տատը նան կնեզյը շատ ըն ուրիսանում, ըսկսում հւ-
րոկ պըշպըշորելը, տա թա՝ պա քոն իլած տղան հու վա։ Կնեզյը
թա քու տղատ ա, քզանա ետեն ա իլալ, տու տընսալ շըս, մեհենդյ
մըծացալ ա, քու բոյիտ տընուալ.

